

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Դավիթ Սարգսյան՝

**1. Յեղասպանության համար պետության
պատասխանատվության հիմնական տարրերը,
պատասխանատվության ձևերն ու տեսակները**

Ինչպե՞ս պետք է պետությունը պատասխանատվություն կրի ցեղասպանության համար: Ժամանակակից միջազգային իրավունքում սովորաբար պետությունների պատասխանատվության հարցերը կարգավորվում են 2001թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 56/83 բանաձևով: Այն վերնագրված է «Պետությունների պատասխանատվությունը միջազգային հակաիրավական արարքների համար»: Քննարկելով այս բանաձևում տեղ գտած հոդվածները՝ այն պետք է ուսումնասիրենք 1948թ. Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի հետ միասին: Բանաձևի առաջին հոդվածում ասվում է, որ պետության յուրաքանչյուր միջազգային հակաիրավական արարք ակնկալում է այդ պետության միջազգային պատասխանատվություն: Պետության վարքագծի միջազգային-հակաիրավական որակումը որոշվում է միջազգային իրավունքով, և այդ որակման վրա ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ ներպետական իրավունքով վարքագծի իրավական լինելը (հոդվ. 3): Այնուհետև նշվում է, որ պետության միջազգային հակաիրավական արարք առկա է այն դեպքում, եթե գործողությամբ կամ անգործությամբ արտահայտված վարքագիծը.

1. վերագրվում է պետությանը միջազգային իրավունքով, և
2. ներկայացնում է պետության ստանձնած պարտավորության միջազգային իրավական խախտում:

¹ Իրավագիտության մագիստրոս, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ դիտորդ, իրավախորհրդատու:

Այսինքն՝ ստացվում է, որ պետության միջազգային հակաիրավական արարքը կարող է դրսևորվել և՛ գործողությամբ, և՛ անգործությամբ: Արարքը պետք է միջազգային որևէ իրավական նորմով ընդունված լինի որպես հակաիրավական և համարվի պետության կողմից կատարված, հակառակ դեպքում, երբ չի ապացուցվում հակաիրավական արարքի և պետության վարքագծի (դրսևորված գործողությամբ կամ անգործությամբ) կապը, պետությունը չի կրի պատասխանատվություն: Եվ երկրորդ, պետության արարքը հակաիրավական է համարվում, եթե պետությունն իր իսկ ստանձնած միջազգային իրավական պարտավորությունները չի կատարում: Այդ 2 տարրերի վրա բազմիցս հղումներ են եղել միջազգային դատարանի կողմից: Օրինակ, արդարադատության միջազգային դատարանը Դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմի մասին գործով նշել էր, որ Իրանի պատասխանատվությունը հաստատելու համար նախ անհրաժեշտ է որոշել, թե, իրավական առումով, որքանով համապատասխան արարքները կարող են դիտվել Իրանի պետության կողմից յուրացված: Եվ երկրորդ, հարկավոր է քննարկել դրա համատեղելիության կամ անհամատեղելիության հարցը գործող պայմանագրերով Իրանի պարտավորությունների հետ կամ միջազգային իրավունքի այլ նորմերին, որոնք կարող են կիրառվել [1, p. 3]:

Ինչ վերաբերում է ցեղասպանության մասին կոնվենցիային, ապա բոլոր այն պետությունները, որոնք վավերացրել են այդ կոնվենցիան, ստանձնել են պայմանագրային միջազգային իրավական պարտավորություններ, որոնք նախատեսված են կոնվենցիայի հոդվածներով: Քննարկենք պետության պատասխանատվության հարցն ըստ պայմանագրային պարտավորությունները չկատարելու, կոնկրետ այս դեպքում՝ ցեղասպանության մասին կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար: Ցեղասպանության մասին կոնվենցիայի 1-ին հոդվածում ասվում է. «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»: Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը հանցագործություն է, այսինքն՝ նրանք ընդունում են, որ այն եղել է հանցագործություն նաև մինչև կոնվենցիայի ընդունումը: Այս հոդվածով պետությունները ստանձնում են պարտավորություն՝ կանխարգելել ցեղասպանությունը թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամանակ: Այսինքն, եթե եղել է ցեղասպանություն և պետությունը կարող էր կանխել, բայց չի կանխել այն, ուրեմն առկա է պետության ստանձնած պարտավորության խախտում, և պետությունը ենթակա է պատասխանատվության կոնվենցիայով ստանձնած պարտավորու-

թյունները չկատարելու համար: Սույն հոդվածով պետությունը ստանձնում է նաև պարտավորություն՝ պատժել ցեղասպանությունը կատարողներին, այսինքն՝ այս դեպքում պետությունը ենթակա է պատասխանատվության, երբ չի պատժում ցեղասպանության կատարման համար: Այդպիսի նախադեպ եղել էր Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի և Չեռնոգորիայի գործով, երբ դատարանը մեղավոր ճանաչեց Սերբիային 1995թ. Սրբբենիցայի ցեղասպանությունը չկանխարգելելու և այն կատարողներին չպատժելու համար¹:

Կոնվենցիան իր 3-րդ հոդվածում նշում է այն պատժելի արարքները, որոնց համար պետությունը նույնպես պետք է պատժի: Այդ պատժելի արարքներն են.

- ցեղասպանությունը,
- ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,
- ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,
- ցեղասպանություն կատարելու փորձը,
- հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

Նշված 5 դեպքերից յուրաքանչյուրի պարագայում, երբ պետությունը չի պատժում մեղավորներին, ինքն է ենթարկվում պատասխանատվության: Այստեղ հարկավոր է նշել նաև, որ ըստ 4-րդ հոդվածի, այդ թվարկվածներից որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի, անկախ այն բանից՝ նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք: Ցեղասպանության մասին կոնվենցիայով պետությունների համար պարտավորություն է նախատեսում նաև 5-րդ հոդվածը, ըստ որի. «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապատասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնավորապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար»: Կոնվենցիայի այն մասնակից պետությունները, որոնք չեն կատարի այս հոդվածի պահանջները, նույնպես կարող են ենթարկվել պատասխանատվության կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար:

ՄԱԿ 56/83 բանաձևի 3-րդ գլխում խոսվում է պարտավորությունների խախտման մասին: Պետության միջազգային իրավական պարտավորության խախտում առկա է այն դեպքում, երբ տվյալ պետության վարքագիծը չի համապատասխանում նրան, ինչ նրանից պահանջում է այդ պարտավորությունը, անկախ դրա ծագումից կամ բնույթից (հոդված 12): Պետության ոչ մի վարքագիծ չի հանդիսանում միջազգային իրավական պարտավորության խախտում, եթե այդ պարտավորությունը չի կապվում տվյալ պետությանն այդ

¹ <http://www.anti-glob.ru/kpsm/mnen/srebren.htm>

արարքի կատարման ժամանակ (հոդվ. 13): Այսինքն՝ արարքը կհամարվի հակաիրավական, եթե կոնկրետ արարքի կատարման պահին պետությունն ունեցել է այն պարտավորությունը, որը խախտել է: Շատերը կարող են տպավորություն ստանալ, որ եթե պարտավորությունները պետության համար առաջացել են կոնվենցիայի անդամ դառնալով, ուրեմն մինչև կոնվենցիայի ընդունումը կամ մինչև դրա անդամ դառնալը պետությունը չունի որևէ պարտավորություն: Սկզբունքորեն այդպես է, բայց ոչ 1948թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի դեպքում: Կարող է հարց առաջանալ, թե ինչու ուրիշ միջազգային պայմանագրերով այդպես է, իսկ 1948թ. կոնվենցիայով՝ ոչ: Այստեղ գործ ունենք արդեն ոչ թե սովորական պարտավորության, այլ համապարտադիր (իմպերատիվ)՝ *jus cogens* նորմի հետ, որն առաջացնում է *erga omnes* պարտավորություն: *Erga omnes* պարտավորությունների գոյության հայեցակարգը լայն տարածում է ստացել ժամանակակից միջազգային իրավունքում: Այդ դրույթի հաստատման գործում էական դերը պատկանում է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի վերապահումների մասին» ՄԱԿ Միջազգային դատարանի 1951թ. մայիսի 28-ի Խորհրդատվական եզրակացությանը, որում դատարանը սահմանել է, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվել են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես բոլոր պետությունների համար պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ պայմանագրային ամրագրման» [2, p. 15; 3, էջ 72]: Տվյալ հայեցակարգը հետագայում լայն ճանաչում ստացավ շնորհիվ «*Barselona Traction*» ընկերության գործով ՄԱԿ Միջազգային դատարանի 1970թ. որոշման: Նրանում, մասնավորապես, նշվում էր. «Հիմնարար տարբերություն պետք է անցկացնել պետության՝ ամբողջ միջազգային հանրության նկատմամբ (*erga omnes*) ստանձնած պարտավորությունների և դիվանագիտական պաշտպանության ոլորտում այլ պետության նկատմամբ առաջացող պարտավորությունների միջև: Հենց իրենց բնույթով առաջինները վերաբերում են բոլոր պետություններին: Ընդգրկվող իրավունքների կարևորության տեսանկյունից՝ բոլոր պետությունները կարող են դիտվել որպես դրանց պաշտպանության հարցում իրավական շահ ունեցողներ. խոսքը բնույթի պարտավորությունների մասին է» [4]: Այնուհետև որոշման մեջ նշվում է, որ «յուրաքանչյուր պետություն միջազգային հանրությանն անդամակցելու ուժով իրավական շահ ունի որոշակի հիմնարար իրավունքների պաշտպանության և որոշակի հիմնարար պարտավորությունների կատարման գործում»: Դրանց շարքին դատարանը դասել է «օրենքից դուրս ագրեսիայի և ցեղասպանության ակտերը, ինչպես նաև... մարդու հիմնական իրավունքներին վերաբերող նորմերը և սկզբունքները՝ ներառյալ ստրկությունից և ռասայական խտրականությունից պաշտպանությունը»: Այս դրույթը դատա-

րանի կողմից բազմիցս հաստատվել է նաև հետագայում [3]: Մեջբերենք նաև 56/83 բանաձևի հակաիրավականությունը բացառող հանգամանքների մասին 5-րդ գլխից մի հոդված: Մասնավորապես, հոդված 26-ում ասվում է. «Ոչինչ այս գլխում չի բացառում պետության ցանկացած արարքի հակաիրավականությունը, եթե այդ արարքը չի համապատասխանում ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմից բխող պարտավորությանը»: Այն դեպքերում, երբ գոյություն ունի բացահայտ կոլիզիա սկզբնական պարտավորությունների միջև, որոնցից մեկը պետության համար առաջանում է անմիջականորեն ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից, ակնհայտորեն ենթադրվում է, որ այդպիսի պարտավորությունը պետք է ունենա գերակայող ուժ: Ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերն ամրագրում են հստակ սկզբունքներ, որոնք թույլ են տալիս կարգավորել բոլոր ակնհայտ կոլիզիաները կամ դրանց մեծ մասը: Հարկավոր է նշել, որ հակաիրավականությունը բացառող հանգամանքները 5-րդ գլխի առաջին մասում չեն հաստատում և չեն արդարացնում ոչ մի նահանջ ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից: Օրինակ, հակամիջոցներ ընդունող պետությունը չի կարող հետ կանգնել այսպիսի կանոնից. գենոցիդը չի կարող արդարացնել պատասխան գենոցիդը: Նման կերպ ծայրահեղ անհրաժեշտության վրա հղում անելով՝ իմպերատիվ նորմի խախտումը չի կարող արդարացնում հանդիսանալ: Ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը որոշելու համար կան խիստ չափանիշներ: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 53-րդ հոդվածում նշվում է դրանց մասին: Մասնավորապես. «Պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին: Սույն Կոնվենցիայի նպատակների համար ընդհանուր միջազգային պարտադիր նորմն այն է, որը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով» [5, էջ 232]: Մինչ այժմ այդ չափանիշով շատ քիչ իմպերատիվ նորմեր են ճանաչվել որպես այդպիսին: Հստակ ընդունված և ճանաչված իմպերատիվ նորմերից են արգելքները կապված ագրեսիայի հետ, ցեղասպանության, ստրկության, ռասայական խտրականության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և խոշտանգումների, ինչպես նաև ինքնորոշման իրավունքը:

Կարծում ենք՝ ցեղասպանության հանցագործության պատասխանատվության համար պետք է հաշվի առնել նաև Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին 1968թ. կոնվենցիան: Այս կոնվեն-

ցիայի 1-ին հոդվածի 2-րդ մասում ցեղասպանության հանցագործությունը նշվում է այն հանցագործությունների շարքում, որոնց պատժելու համար վաղեմության ժամկետներ չեն կարող կիրառվել: Մասնավորապես. «Վաղեմության ոչ մի ժամկետ, անկախ կատարման ժամանակից, չի կիրառվում հետևյալ հանցագործությունների նկատմամբ. ...b) մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես դրանք սահմանվել են Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի 1945թ. օգոստոսի 8-ի կանոնադրությամբ և հաստատվել են Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946թ. փետրվարի 13-ի 3(I) և 1946թ. դեկտեմբերի 11-ի 95(I) բանաձևերով, զինված հարձակման կամ օկուպացիայի միջոցով արտաքսման և ապարտեիդի քաղաքականության հետևանքով անմարդկային գործողությունների ու ցեղասպանության հանցագործության, ինչպես սահմանված է Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948թ. կոնվենցիայում, եթե անգամ այդ գործողությունները չեն համարվում այն երկրի ներպետական իրավունքի խախտում, որտեղ դրանք կատարվել են»: Մեջբերենք նաև 2-րդ հոդվածը. «1-ին հոդվածում հիշատակված հանցագործություններից ցանկացածի կատարման դեպքում սույն կոնվենցիայի դրույթները կիրառվում են պետական իշխանության ներկայացուցիչների և առանձին անձանց նկատմամբ, որոնք, որպես հանցագործություն կատարողներ կամ հանցակիցներ, մասնակցում են կամ անմիջականորեն դրդում են այլ անձանց՝ կատարելու այդ հանցագործություններից ցանկացածը, կամ հրահրում են դրանց կատարումը՝ անկախ ավարտվածության աստիճանից, և այն պետական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ, որը թույլ է տվել դրանց կատարումը»: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթերցումից հետո կարող են կարծիքներ լինել, թե կոնվենցիան վերաբերում է միայն ֆիզիկական անձանց պատասխանատվությանը և դա կապ չունի պետության պատասխանատվության հետ: Նման կարծիքները հերքելու համար ներկայացնենք 2 հանգամանք: Առաջին հանգամանքն այն է, որ կոնվենցիան վաղեմության ժամկետ չի կիրառում ոչ թե հանցագործների, այլ հանցագործությունների նկատմամբ: Եթե ուշադիր լինենք, կտեսնենք, որ թե՛ վերնագրում, թե՛ կոնվենցիայի հոդվածներում նշվում է *հանցագործություններ* բառը: Մյուս հանգամանքն այն է, որ ֆիզիկական անձանց գործողությունների համար պետությունը նույնպես կարող է կրել պատասխանատվություն: Այսինքն՝ ֆիզիկական անձանց գործողությունները կարող են վերագրվել պետությանը: Այդ դեպքերի մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև:

Իսկ այժմ քննարկենք այն դեպքերը, երբ հակաիրավական արարքը վերագրվում է պետությանը միջազգային իրավունքով: Ինչպես վերը նշեցինք, արարքը պետք է միջազգային որևէ իրավական նորմով ընդունված լինի որ-

պես հակաիրավական և համարվի պետության կողմից կատարված: Բնչպես տեսանք քիչ առաջ, կոնվենցիայով պետությունը ստանձնում էր պատասխանատվություն՝ պատժել ցանկացածին կոնվենցիայի 3-րդ հոդվածում նշված արարքներից որևէ մեկի կատարման համար: Սակայն հնարավոր են նաև դեպքեր, երբ այդ հանցագործությունը կատարած անձի կամ անձանց, կամ որևէ մարմնի կողմից կատարվելու դեպքում այդ գործողությունների համար պատասխանատու է և պատասխանատվություն է կրում հենց ինքը՝ պետությունը: Այս հարցերի կարգավորման համար կրկին դիմենք 2001թ. ՄԱԿ 56/83 բանաձևին, որի 2-րդ գլուխը վերնագրված է «Արարքի վերագրումը պետությանը»: Մասնավորապես, այնտեղ նշվում է, որ միջազգային իրավունքում պետության ցանկացած մարմնի վարքագիծը դիտվում է որպես այդ պետության վարքագիծ անկախ այն բանից, թե այդ մարմինն իրականացնում է օրենսդիր, գործադիր, դատական կամ այլ գործառնություններ, անկախ այն դիրքից, որը նա գրավում է պետության համակարգում, և անկախ այն բանից՝ համարվում է այն պետության կենտրոնական իշխանության, թե վարչատարածքային միավորի մարմին: «Մարմին» հասկացությունը ներառում է ցանկացած անձ կամ ցանկացած հաստատություն, որը ներպետական իրավունքով ունի այդպիսի կարգավիճակ (հոդվ. 4): Անձի կամ հաստատության վարքագիծը, որը, 4-րդ հոդվածի համաձայն, չի հանդիսանում պետության մարմին, բայց այդ պետության իրավունքում լիազորված է իրականացնել պետական իշխանության տարրեր, դիտվում է որպես այդ պետության արարք միջազգային իրավունքով՝ պայմանով, որ տվյալ դեպքում այդ անձը կամ հաստատությունը գործում է այդ հատկանիշով (հոդվ. 5): Պետության մարմնի կամ անձի, կամ հաստատության վարքագիծը, որը լիազորված է իրականացնել պետական իշխանության տարրեր, դիտվում է որպես այդ պետության արարք միջազգային իրավունքով, եթե այդ մարմինը, անձը կամ հաստատությունը գործում է այդ հատկանիշով, անգամ եթե նրանք գերազանցում են իրենց լիազորությունները կամ խախտում են հրահանգները (հոդվ. 7): Պատասխանատվության առումով պետության համար կարևոր նշանակություն ունեն ներպետական իրավունքը և յուրաքանչյուր պետության պրակտիկան: Պետության կառուցվածքը և նրա մարմինների գործառնությունները, որպես կանոն, չեն կարգավորվում միջազգային իրավունքով: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում, թե ինչպես պետք է կազմակերպվի պետական կառավարումը, և ինչ գործառնություններ պետք է իրականացնեն պետական իշխանության մարմինները: Ճիշտ է, չնայած պետությունն ինքնուրույն կարող է որոշել իր ներպետական կառուցվածքը և գործառնություններն իր օրենսդրությանն ու փորձին համապատասխան, միջազգային իրավունքը նույնպես ունի որոշակի դեր: Օրինակ, որոշ հաստատությունների վարքագիծը, որոնք կատարում են պետական գոր-

ծառայողներ և ունեն պետական լիազորություններ (օրինակ՝ դատախազությունը), վերագրվում է պետությանը, անգամ եթե այդ հաստատությունները ներպետական իրավունքով դիտվում են որպես ինքնուրույն և անկախ գործադիր իշխանությունից: Միջազգային իրավունքի համաձայն և անկախ ներպետական իրավունքի դրույթներից, պետությանը կարող է վերագրվել նաև այն պետական մարմինների վարքագիծը, որոնք դուրս են գալիս իրենց լիազորությունների շրջանակից:

Արարքը վերագրվում է պետությանը որպես միջազգային իրավունքի, այլ ոչ թե ներպետական իրավունքի սուբյեկտի: Ներպետական իրավունքի համաձայն՝ գերատեսչությունները, տարբեր բաժանմունքները, պետական հանձնաժողովները և միավորումները կարող են ունենալ ինքնուրույն իրավասուբյեկտություն, առանձին հաշիվներ և կրել առանձին պարտավորություններ: Պետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պատասխանատու է բոլոր ատյանների մարմինների և պաշտոնատար անձանց համար, որոնք հանդիսանում են նրա ապարատի մաս և գործում են որպես այդպիսին, անկախ նրանից՝ ունեն նրանք ներպետական իրավունքին համապատասխան ինքնուրույն իրավասուբյեկտություն, թե՛ ոչ:

Անձի կամ անձանց խմբի վարքագիծը դիտվում է որպես պետության արարք միջազգային իրավունքով, եթե այդ անձը կամ անձանց խումբը փաստորեն գործում է այդ պետության հրամանով կամ ղեկավարությամբ, կամ հսկողությամբ այդ գործողությունն իրականացնելիս (հոդված 8): Այստեղ կարևոր է նշել, որ այդ ղեկավարությունն ու հսկողությունն ընդհանուր բնույթ չեն կրում, այլ պետք է որոշակիորեն կոնկրետացված լինեն: Օրինակ, հսկողությունը կոնկրետ գործողության նկատմամբ, որն ունի հակաիրավական բնույթ: Կամ կոնկրետ հրաման տրվի և ղեկավարվի ցանկացած կոնկրետ գործողություն: Որպես օրինակ կարելի է հիշել Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների գործը: Այստեղ հարց էր բարձրացվել վերահսկողության այն չափի մասին, որը բավարար կլիներ գործողությունը պետությանը վերագրելու համար: Այս գործում խոսքը հետևյալի մասին է: Կարելի է արդյոք «Կոնտրաս» խմբավորման գործողությունները վերագրել Ամերիկայի Միացյալ Նահանգներին, և կրո՞ւմ է արդյոք Միացյալ Նահանգներն ընդհանուր պատասխանատվություն «Կոնտրաս»-ի կողմից կատարված միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների համար: Այդ հարցը դատարանի կողմից քննվել էր վերահսկողության իրականացման տեսանկյունից: Դատարանը որոշել էր, որ «Կոնտրասի» բոլոր գործողությունների համար պատասխանատու չէ ԱՄՆ-ը: Մասնավորապես. «Չնայած լայն ֆինանսական և այլ օժանդակությանը, ցուցաբերված Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից, չկան անհերքելի ապացույցներ, որ Միացյալ Նահանգներն իսկապես

իրականացրել է այդ աստիճանի վերահսկողությունն բոլոր բնագավառներում, որը թույլ կտար համարել, որ «Կոնտրասը» գործում է նրա անունից: Ամերիկայի Միացյալ Նահանգների մասնակցության բոլոր հիշատակված ձևերը և անգամ պատասխանող պետության ընդհանուր հսկողությունն ուժերի նկատմամբ, որոնք շատ հարցերով կախված էին ԱՄՆ-ից, իրենք իրենցով առանց լրացուցիչ ապացույցների չեն նշանակում, թե ԱՄՆ-ը ղեկավարում էր այն գործողությունները, որոնք խախտել են մարդու իրավունքները և մարդասիրական իրավունքի նորմերը (որոնց հղում էր անում դիմող կողմը), կամ ստիպում էին այդպիսի գործողությունների կատարմանը: Այդպիսի գործողությունները հանգիստ կարող էին «Կոնտրասի» կողմից կատարվել առանց Ամերիկայի Միացյալ Նահանգների հսկողության:

Որպեսզի այդ գործողությունների համար Ամերիկայի Միացյալ Նահանգների իրավական պատասխանատվության հարց բարձրացվի, սկզբունքորեն պետք է ապացուցվի, որ պետությունն իրականացրել է էֆեկտիվ վերահսկողություն այդ ռազմական կամ կիսառազմական գործողությունների նկատմամբ, որոնց հետևանքով էլ եղել էին վերոնշյալ խախտումները [6]: Այսպիսով, չնայած ապացուցված էր Ամերիկայի Միացյալ Նահանգների օժանդակությունը «Կոնտրասին», վերջինիս գործողությունները միայն այն դեպքերում էին վերագրվել ԱՄՆ-ին, երբ հիմնավորված էին նրա փաստացի մասնակցությունն ու ղեկավարումը: Դատարանը հաստատեց, որ ընդհանուր կախվածությունը և օժանդակությունը բավարար հիմք չեն հանդիսանում այս կամ այն արարքը պետությանը վերագրելու համար:

Արարքը կարող է վերագրվել պետությանը նաև այն դեպքում, երբ անկախ ամեն ինչից՝ պետությունն ինքն ընդունում է արարքը որպես իր կողմից կատարված:

Այս բաժնի շրջանակներում շատ կարևոր է նաև անդրադառնալ պատասխանատվության այն ձևերին ու տեսակներին, որոնք կարող են կիրառվել պետության նկատմամբ միջազգային հակաիրավական արարք կատարելու դեպքում: Պետությունների պատասխանատվության հետ կապված հարցերը կարգավորվում են սովորութային նորմերով: Տեսական գրականության մեջ բազմաթիվ կարծիքներ կան դրա վերաբերյալ: Տեսական գրականության մեջ սովորաբար խոսում են միջազգային իրավական պատասխանատվության քաղաքական և նյութական տեսակների մասին: Քաղաքական պատասխանատվությունը, որպես կանոն, ուղեկցվում է իրավախախտ պետության դեմ հարկադրական միջոցներ կիրառելով և զուգակցվում է նյութական պատասխանատվությանը: Քաղաքական պատասխանատվության առավել տարածված ձևերն են ռետորսիաները, ռեպրեսալիաները, սատիսֆակցիան, ռեստորացիան, միջազգային կազմակերպությունում անդամակցության կասեցումը

կամ անդամությունից հանելը, ագրեսորին ուժով ճնշելը, որոնք իրացվում են սանկցիաների կիրառման միջոցով: Նյութական պատասխանատվությունն առաջանում է պետության կողմից նյութական վնաս պատճառելու հետ կապված իր միջազգային պարտավորությունները խախտելու դեպքում: Այն կարող է դրսևորվել ռեպարացիայի, ռեստիտուցիայի և սուբստիտուցիայի ձևով [7, էջ 138, 140]: Ներկայացնենք պետությունների պատասխանատվության այն ձևերը, որոնք ընդունվել են ՄԱԿ 56/83 բանաձևում: Բանաձևի հոդված 31-ի կետ 1-ում նշված է, որ «միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասի համար լիարժեք հատուցում տրամադրել»: Նույն հոդվածի կետ 2-ի համաձայն՝ «վնասը ներառում է պետության հակաիրավական արարքով պատճառված ցանկացած կորուստ, ինչպես նյութական, այնպես էլ բարոյական»: Միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասի լիարժեք հատուցումն իրականացվում է ռեստիտուցիայի, կոմպենսացիայի և սատիսֆակցիայի ձևով՝ կամ առանձին, կամ դրանց համադրությամբ... (հոդված 34): Որպես հատուցման հիմնական և օպտիմալ միջոց ճանաչվել է ռեստիտուցիան: Կոմպենսացիան գտնվում է երկրորդ տեղում և կիրառվում է այն դեպքերում, եթե ռեստիտուցիան ոչ արդյունավետ է կամ կապված է այնպիսի բեռի հետ, որն ընդհանրապես անհամաչափ է կոմպենսացիայից ստացված օգտին: Սատիսֆակցիան բնութագրվում է որպես լրացուցիչ, բացառիկ միջոց, որը կիրառվում է այն դեպքում, երբ ռեստիտուցիայի և կոմպենսացիայի կիրառումն անհնարին կամ ոչ բավարար է վնասը հատուցելու համար:

Ռեստիտուցիան՝ որպես միջազգային իրավական պատասխանատվության ձև, մինչև միջազգային հակաիրավական արարքը գոյություն ունեցած վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է: Ռեստիտուցիան միջազգային իրավական պատասխանատվության առավել առաջնային ձևն է, քանի որ հատուցման հիմնախնդիրը լուծելիս նախևառաջ առաջանում է մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման հնարավորության խնդիրը: Ռեստիտուցիայի առաջնային բնույթը հաստատվել է դեռևս Միջազգային արդարադատության մշտական պալատի կողմից Խոժովի գործարանի գործով կայացրած որոշման մեջ [8, էջ 77]: Ռեստիտուցիան որպես այդպիսին կարող է ներառել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական պատասխանատվության ձևեր: Ելնելով նշվածից՝ միջազգային իրավունքի գիտության մեջ առանձնացնում են ռեստիտուցիայի 2 տարատեսակ՝ ռեստիտուցիա բնեղենով, որը նախկին նյութական վիճակի վերականգնումն է և ռեստորացիա կամ իրավական ռեստիտուցիա, որը խախտված իրավունքների վերականգնումն է: Տվյալ տարատե-

ասկին են դասվում, մասնավորապես, ապօրինի բռնազավթման դադարեցումը, օրենսդրական, ենթաօրենսդրական, վարչական և դատական ակտերի անվավեր ճանաչումը և այլն: Պատասխանատվության մասին հողվածներում (56/83 բանաձև) ռեստիտուցիային նվիրված է հողված 35-ը, համաձայն որի՝ «միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է ռեստիտուցիա իրականացնել, այսինքն՝ վերականգնել մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակը, այն ծավալով, որով այդ ռեստիտուցիան:

1. նյութապես անհնար չէ,
2. չի առաջացնում կոմպենսացիայից ստացված օգուտին ակնհայտորեն անհամաչափ բեռ»:

Ցեղասպանության դեպքում նյութական ռեստիտուցիան ներառում է պատճառված նյութական վնասի բնեղենով հատուցումը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ցեղասպանությունը հաճախ ուղեկցվում է հետապնդվող խմբի ներկայացուցիչներին պատճառված լուրջ նյութական վնասով, քանզի վերջիններս սովորաբար ստիպված են լինում լքել իրենց շարժական և անշարժ գույքը: Որպես կանոն ցեղասպանության զոհերի ունեցվածքը կամ բռնագրավվում է պետության կողմից, կամ ոչնչացվում, կամ պարզապես հափշտակվում է դիակապտիչների կողմից: Հետևաբար, ցեղասպանության դեպքում պատասխանատվություն կրող պետությունը, առաջին հերթին, պարտավոր է հատուցել այդ հանցագործությանը պատճառված վնասը բնեղենով, որը հիմնականում ներառում է հանցագործության արդյունքում ապօրինաբար վերցված գույքը ցեղասպանության զոհերին կամ նրանց ժառանգներին և իրավահաջորդներին վերադարձնելը, իսկ վնասված լինելու դեպքում՝ այն վերականգնելը: Այլ կերպ է դրված հարցը ռեստորացիայի (իրավական ռեստիտուցիայի), այսինքն՝ մինչև տվյալ հանցագործությունը գոյություն ունեցած իրավական վիճակի վերականգնման դեպքում: Իրավական ռեստիտուցիայի ձևեր կարող են լինել՝ ի խախտումն միջազգային իրավունքի ընդունած օրենքի անվավեր ճանաչումը, կամ հակաիրավական կերպով ընդունած օրենքի անվավեր ճանաչումը, կամ հակաիրավական կերպով ընդունած վարչական, կամ դատական ակտի վերանայումը: Կարող է նաև որոշակի միջազգային պայմանագիրը դադարեցնելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացնել, եթե միջազգային իրավունքը թույլ է տալիս դա [8, էջ 79]: Նշված ձևերից ցեղասպանության դեպքում առաջնային նշանակություն ունեն օրենսդրական փոփոխությունները, առաջին հերթին, ցեղասպանության քաղաքականությունն ուղղակի կամ անուղղակի կերպով լեգիտիմացնող օրենքներն ու համապատասխան նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելը:

Կոմպենսացիան (փոխհատուցումը) ցեղասպանությամբ պատճառված վնասի համընդգրկուն ձև է: Ընդհանրապես, ցեղասպանության հանցագործության պարագայում կոմպենսացիան պատճառած վնասի հատուցման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար միջոց է: ՄԱԿ վերոնշյալ բանաձևի՝ պատասխանատվության մասին հոդվածներում կոմպենսացիայի վերաբերյալ դրույթները սահմանված են հետևյալ կերպ. «Միջազգային հակախրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է փոխհատուցել այդպիսի արարքով պատճառած վնասն այնքանով, որքանով այդ վնասը չի հատուցվում ռեստիտուցիայով» (հոդված 36, կետ 1): Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանել է, որ «Կոմպենսացիան ընդգրկում է ֆինանսական արտահայտությամբ հաշվարկվող ցանկացած վնաս՝ ներառյալ բաց թողնված օգուտն այնքանով, որքանով այն հաստատված է»: Պետք է նշել, որ դրամով հաշվարկվող վնասը ներառում է ինչպես բուն պետությանը, այնպես էլ դրա ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասը: Ցեղասպանության հանցագործության պարագայում առաջնային նշանակություն ունի հենց ցեղասպանության զոհերին, այլ ոչ թե պետությանը պատճառած վնասը [8, էջ 82]: Հարկավոր է նշել, որ փոխհատուցման ենթակա է ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառած նյութական, այլ նաև ոչ նյութական (բարոյական) վնասը, որն ասելով սովորաբար հասկանում են հարազատների և ազգականների կորուստը, ցավը և տառապանքը, անձի, բնակարանի կամ մասնավոր կյանքի վրա հարձակման հետ կապված զգացմունքները վիրավորելը և այլն: Ըստ էության, ցեղասպանության հանցագործության պարագայում հետապնդվող խմբի անդամների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, ռեզենտացիային, հոգեկան վիճակին վնաս պատճառելը, նրանց ազգականների և հարազատների մահվան արդյունքում բոլոր տեսակի առավելություններից զրկվելն էլ կազմում են բարոյական վնասի հատուցման հիմքը:

Սատիսֆակցիան միջազգային հակախրավական արարքով պատճառած բարոյական վնասի ձևն է: Բանաձևում նշվում է. «Միջազգային հակախրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է սատիսֆակցիա տրամադրել սովյալ արարքով պատճառած վնասի համար այնքանով, որքանով այն չի կարող հատուցվել ռեստիտուցիայով կամ կոմպենսացիայով» (հոդված 37, կետ 1): Թեև սատիսֆակցիայի ձևերի որևիցե կոնկրետ ցանկ միջազգային իրավունքում նախատեսված չէ, այդուհանդերձ, նշված հոդվածի երկրորդ կետն առաջարկում է պատասխանատվության ձևերի, որոնք կարող են ներառվել սատիսֆակցիա հասկացության շրջանակների մեջ, մոտավոր ցանկը, մասնավորապես, նշելով, որ «սատիսֆակցիան կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ավստասանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ այլ պատշաճ ձևի միջոցով»: Սատիս-

Ֆակցիայի ձևը և ծավալը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է իրավախախտման բնույթից և ծանրությունից [8, էջ 84]: Ցեղասպանությունը, մեր կարծիքով, իր բնույթով և ծանրությամբ ենթադրում է սաստիսֆակցիայի ամենալուրջ ձևերի կիրառումը: Պատասխանատվության մասին հողվածները նախատեսում են սաստիսֆակցիայի կիրառման անհնարինությունը միայն այն դեպքում, երբ այն անհամաչափ է վնասին կամ կարող է ընդունել պատասխանատվություն կրող պետությանը նվաստացնող ձև: Սաստիսֆակցիան՝ որպես վնասի հատուցման ձև, հատկապես կարևոր է ցեղասպանության հանցագործության պարագայում: Ինչպես հայերի դեմ իրագործած ցեղասպանության, այնպես էլ ցեղասպանությունների այլ դեպքերում, հաճախ պատասխանատվություն կրող պետությունը չի ճանաչում, ժխտում է դրա կատարման փաստը, ահա ինչու արդեն իսկ ցեղասպանության փաստի ճանաչման հնարավորությունը՝ որպես սաստիսֆակցիա, ձեռք է բերում հատուկ նշանակություն:

2. Կուսակցական մարմինների գործողությունը կամ անգործությունը որպես պետությանը ցեղասպանության համար պատասխանատվության ենթարկելու հիմք

Իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ կարծիքներ կան այն մասին, թե երբ է ծագում հանցագործության համար պատասխանատվությունը [9, c. 46-47]: Որոշ հեղինակներ կարծում են, որ պատասխանատվությունն առաջանում է այն պահից, երբ տեղի է ունենում միջազգային-իրավական նորմով նախատեսված խախտում: Մյուսներն ասում են, որ վնասների հատուցման պարտականություն չի կարող լինել, մինչև չլինի պահանջ: Այսինքն՝ իրավախախտ պետության պատասխանատվությունը ծագում է նրան հատուցման պահանջ ներկայացնելու պահից: Երրորդները կարծում են, որ միջազգային իրավական պատասխանատվությունը սկսվում է այն պահից, երբ իրավախախտ պետությունը գիտակցում է, որ միջազգային իրավախախտում է թույլ տվել և տուժած պետության հետ բանակցությունների արդյունքում համաձայնում է իրեն մեղավոր համարել և, հետևաբար, հատուցել վնասը: Վ.Ա. Վասիլենկոն իրավացիորեն նշում է, որ իրավախախտ պետությունը պատասխանատու է իրավախախտում կատարելու պահից, և հենց դա էլ հիմք է հանդիսանում, որ տուժած պետությունը պահանջներ ներկայացնի իրավախախտ պետությանը [9, c. 49]:

Արդեն գոյություն ունեցող և գործող միջազգային կոնվենցիաներում, որոնք նվիրված են միջազգային հանցագործություններին, պետության պատասխանատվության հարցը գրեթե լուծված չէ, թեև այդ ուղղությամբ պայքարը շարունակվում է: Պատասխանատվության հետ կապված խնդիրները հիմնականում կարգավորվում են սովորության իրավունքով: Միջազգային հանրությունը լուրջ ավանդ ունի խնդրո առարկայի լուծման հարցում: Այդ ուղղու-

թյամբ կարևոր քայլ էր, ինչպես արդեն նշվել է, ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 2001թ. դեկտեմբերի 12-ին ընդունած 56/83 բանաձևը:

Անդրադառնանք վերոնշյալ բանաձևին, Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948թ. կոնվենցիային, պրակտիկայում եղած դեպքերին և փորձենք պատասխանել այն հարցին, թե որքանով կարող է կուսակցական մարմինների գործողությունը կամ անգործությունը հանդիսանալ որպես պետությանը ցեղասպանության համար պատասխանատվության ենթարկելու հիմք: Այդ ամենը փորձենք համադրել Հայոց ցեղասպանության հետ:

1948թ. կոնվենցիայում սահմանված է, թե ինչ է ցեղասպանությունը: Մասնավորապես՝ ցեղասպանություն ասելով հասկացվում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

ա. այդ խմբի անդամների սպանությունը,

բ. այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,

գ. որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

դ. այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,

ե. երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

Պատժելի էին հետևյալ արարքները.

ա. ցեղասպանությունը,

բ. ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,

գ. ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,

դ. ցեղասպանություն կատարելու փորձը,

ե. հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

1948թ. կոնվենցիան սահմանում է նաև, որ դրա կողմերի միջև վեճերը՝ կապված կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրություն, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրում, հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ, ցեղասպանության փորձ կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով: Կոնվենցիայի

կողմերը հաստատում են նաև, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի՝ հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար [10]: 56/83 բանաձևում ասվում է, որ պետության յուրաքանչյուր միջազգային հակաիրավական արարք ակնկալում է այդ պետության միջազգային պատասխանատվություն: Ինչպես արդեն նշել ենք, պետության միջազգային-հակաիրավական արարք առկա է, եթե գործողությամբ կամ անգործությամբ արտահայտված վարքագիծը՝

1. վերագրվում է պետությանը միջազգային իրավունքով, և
2. ներկայացնում է պետության կողմից ստանձնած պարտավորության միջազգային իրավական խախտում [11]:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ մեր դեպքում, ըստ կոնվենցիայի, պետությունը կարող է ենթարկվել պատասխանատվության, եթե կատարել է կոնվենցիայում նշված պատժելի արարքներից որևէ մեկը, չի կանխել դրանց կատարումը, չի պատժել դրանց կատարման համար, այլ կերպ ասած՝ չի կատարել կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները, և որ Միջազգային դատարանը կարող է քննել պետության պատասխանատվության հարցը վիճող որևէ պետության պահանջով:

Առանձնացնենք հետևյալ հարցադրումները.

1. Ո՞ր դեպքերում կարող է կուսակցական մարմինների գործողությունը կամ անգործությունը հանդիսանալ որպես պետության վարքագիծ:
2. Ինչպե՞ս կարող են դրանք հանդիսանալ պետությանը պատասխանատվության ենթարկելու հիմք:

Ընդհանրապես միջազգային հարաբերություններում պետության մարմինների վարքագիծը գնահատվում է որպես իր սեփական վարքագիծ: Ինչպես նշում է Վասիլենկոն, պետությունը պատասխանատու է ոչ թե իր մարմինների հակաիրավական վարքագծի, այլ իր սեփական վարքագծի համար: Պետության ցանկացած վարքագիծ, այդ թվում և հակաիրավական, անհնար է պատկերացնել առանց նրա մարմինների վարքագծի: Պետության մարմինների միջոցով է արտահայտվում նրա ինքնիշխան կամքը: Առանց պետական մարմինների համակարգի չէր կարող իրականացվել ինքնիշխանությունը, որը, իր հերթին, պայմանավորում է այդ համակարգի միասնությունը՝ պետությունը ներկայացնող և մարմնավորող [9, c. 98]: Եվ իրոք, պետությունը պատասխանատու է իր և միայն իր մարմինների համար: Ինչպես նշվում է 56/83 բանաձևի 4-րդ հոդվածում, Միջազգային իրավունքում պետության ցանկացած մարմնի վարքագիծը դիտվում է որպես այդ պետության վարքագիծ անկախ այն բանից,

Թե այդ մարմինն իրականացնում է օրենսդիր, գործադիր, դատական կամ այլ գործառնություններ, անկախ այն դիրքից, որը նա զբաղվում է պետության համակարգում, և անկախ այն բանից՝ համարվում է այն պետության կենտրոնական իշխանության, թե վարչատարածքային միավորի մարմին: «Մարմին» հասկացությունը ներառում է ցանկացած անձ կամ ցանկացած հաստատություն, որը ներպետական իրավունքով ունի այդպիսի կարգավիճակ: Հետևաբար, հարց է ծագում, թե կարող են արդյոք կուսակցական մարմինները համարվել պետության մարմին: Վերոգրյալից, թերևս, կարելի է ենթադրել, որ այս պարագայում կուսակցական մարմինը, որպես այդպիսին, պետք է ներպետական իրավունքով այդպիսի կարգավիճակի արժանացած լինի:

Նիկարագուան ընդդեմ Միացյալ Նահանգների գործի վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ պետությանը կարելի է պատասխանատվության ենթարկել ոչ միայն իր դե յուրե մարմինների վարքագծի, այլ նաև դե ֆակտո մարմինների վարքագծի համար, բայց դե ֆակտո մարմինը պետք է ունենա նույն հատկանիշները, ինչ դե յուրե մարմինը, բացի այն հիմնական իրավունակությունը, որ տրամադրում է պետությունն օրենսդրությամբ [12, p. 587]: Ըստ 56/83 բանաձևի 5-րդ հոդվածի, անձի կամ հաստատության վարքագիծը, որը 4-րդ հոդվածի համաձայն չի հանդիսանում պետության մարմին, բայց այդ պետության իրավունքով լիազորված է իրականացնել պետական իշխանության տարրեր, դիտվում է որպես այդ պետության վարքագիծ միջազգային իրավունքով՝ պայմանով, որ տվյալ դեպքում այդ անձը կամ հաստատությունը գործում են այդ հատկանիշով: Այսինքն՝ այստեղ ընդհանրապես պետք չէ ապացուցել, որ մարմինը գործել է պետության հովանավորությամբ և ֆինանսավորմամբ:

Օրինակ, ֆաշիստական Գերմանիայում ֆաշիստական կուսակցությունը (նացիոնալ-սոցիալիստական) դարձել էր պետական համակարգի մաս: Կենտրոնական և տարածքային կուսակցական մարմինները ստացել էին պետական գործառնություններ և պրակտիկորեն որոշում էին կառավարման բոլոր հարցերը: Պետական պաշտոն կարող էին զբաղեցնել միայն կուսակցության անդամները¹: Ամեն դեպքում, կարծում ենք, կարելի է ընդգծել, որ ֆաշիստական Գերմանիայում կուսակցական մարմինների վարքագիծը դրսևորվում էր պետական ապարատի ներսում: Հիտլերյան նացիոնալ-սոցիալիստական աշխատավորական կուսակցությունն առաջացել է 1919թ.: Նրա ծրագիրը նախապատվությունը տալիս էր գերմանական նոր «Ռեյխ»-ի, հզոր կայսրության ստեղծմանը՝ կառուցված բոլոր մյուս ազգերի ստրկացման, կոմունիզմը և մարքսիզմն արմատախիլ անելու, հրեաների ֆիզիկական ոչնչացման հաշվին: Այսինքն՝ այս պարագայում հրեաների ոչնչացումը նախապես մտադրված էր:

¹ <http://www.de-web.ru/article/a-367.html>

Ինչպես երևաց 1948թ. կոնվենցիայից, մտադրությունը ցեղասպանության հանցագործության կարևոր բաղադրիչներից է: Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալը մեղադրողն ընդդեմ Ակայետուի գործում նշում էր, որ «մտադրությունը հոգեբանական գործոն է և, որպես այդպիսին, շատ դժվար է ապացուցվում, եթե մեղադրյալը չի խոստովանում: Այդ պատճառով մտադրության փաստը հիմնականում վերհանում են այլ փաստերից: Օրինակ, ուշադրություն են դարձնում, թե տվյալ գործողությունները որքան զանգվածային են եղել, որքան սխտեմատիկ են եղել, արդյոք դրանք կատարվել են հենց նույն խմբի ներկայացուցիչների նկատմամբ...» [13]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ բազմակուսակցական համակարգի երկրներում կուսակցական մարմինների վարքագիծը չի կարող համարվել որպես պետության վարքագիծ, համենայնդեպս, եթե այդ պարագայում իշխող կուսակցությունը մեկը չէ: Բայց եթե տոտալիտար, միակուսակցական համակարգի երկիր է, ապա դա կարելի է դիտել որպես պետության վարքագիծ: Ամեն դեպքում, կարծում ենք, որ կուսակցական մարմինների վարքագիծը պետք է արտահայտված լինի պետական ապարատի ներսում, որպեսզի այն համարվի պետության վարքագիծ, իսկ եթե կուսակցական մարմինների վարքագիծը պետական ապարատից դուրս է, ապա չի կարող համարվել որպես պետության վարքագիծ:

Փաստորեն, եթե կուսակցական մարմինների վարքագիծը՝ դրսևորված գործողությամբ կամ անգործությամբ, ընդունվում է որպես պետության վարքագիծ, պետությունը ցեղասպանության համար պատասխանատու կարող է լինել հետևյալ դեպքերում.

- Երբ կուսակցական մարմինների վարքագիծը դրսևորվել է լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ որևէ ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական խմբի անդամների սպանությամբ,
- խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելով,
- խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծմամբ, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացմամբ,
- մարդկային մի խմբից մյուսին երեխաների բռնի փոխանցմամբ:

Ինչպես նաև եթե կուսակցական մարմինների վարքագծում առկա է հետևյալ արարքներից մեկնումեկը.

- ցեղասպանությունը,
- ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,
- ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,

- ցեղասպանություն կատարելու փորձը,
- հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

Ցեղասպանության իրականացման հավանականության բացահայտման հարցերից մեկը (ըստ ՄԱԿ ասամբլեայի) վերաբերում է նկատելի քաղաքական կամ տնտեսական դրդապատճառների առկայությանն այն բանի համար, որ համապատասխան պետությունում կամ տարածաշրջանում քաղաքական առաջնորդները խրախուսում էին տարածայնություններն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերի միջև: Նախկինում, երբ ցեղասպանություններն ապացուցվում էին, կամ կասկած կար, որ ցեղասպանություն է կատարվել, առկա էին քաղաքական կամ տնտեսական դրդապատճառներ որևէ բնակչության խմբի հետապնդումների համար, որոնք էլ հենց հանդիսացել էին առաջ տանող ուժ նրանց համար, ովքեր տեսականորեն կազմակերպում և իրականացնում էին ցեղասպանություն: Օրինակ, այդպես էր այն դեպքերում, երբ այս կամ այն քաղաքական կուսակցության քաղաքական իշխանություն մուտքը և վերջինիս կողմից այդ իշխանությունը պահելը խթանում էր այդ կուսակցության կողմից ընտրագանգվածի պահպանումը, և դա անգամ կախված էր նրա՝ ռասիստական քաղաքականության օգտագործման ճանապարհով պահպանումից, որը բնակչության խմբերի միջև առաջացնում էր տարածայնություններ [14, p. 8]:

Ջեյմս Պետրասն իր «Ժամանակակից շրջանը և 20-րդ դարի ցեղասպանությունները. կայսրության կառուցում և զանգվածային ցեղասպանություններ» աշխատության մեջ գրում է, որ 20-րդ և 21-րդ դարի բոլոր գենոցիդների նախորդել է վիկտիմիզացված հանրության նկատմամբ բռնությունը պետության կամ քաղաքացիական հանրության կողմից: Նա գրում է, որ ցեղասպանությունը կազմակերպվում է պետության կողմից որոշակի շահ հետապնդելով: Եվ դրա համար պետությունն օգտագործվում է նաև քաղաքացիական բնակչությանը՝ ատելություն սերմանելով այդ վիկտիմիզացված հանրության նկատմամբ: Միննույն ժամանակ, պետությունն այնպես է անում, որ այդ քաղաքացիական բնակչությունը նույնպես որոշակի նյութական օգուտ ունենա: Օրինակ, ինչպես թուրքերը և քրդերը ձեռք բերեցին հայկական սեփականությունը, կամ ինչպես գերմանացի բժիշկները ձեռք բերեցին հրեա սպանված կոլեզանների պրակտիկ աշխատանքները և համալսարանական պաշտոնները և այլն: Ըստ Պետրասի, եթե հանեն քաղաքական և տնտեսական հիմքերը, կայսերապաշտական մտորումները և ներքին համախմբման անհրաժեշտությունը, պլանավորված գենոցիդները չեն իրականանա: Նա բացատրում է նաև, թե ինչ եղանակով են պետություններն իրականացնում ցեղասպանություն: Երբ կայսերական պետություններն իրականացնում են ահավոր գենոցիդներ, նրանք փորձում են արդարացնել իրենց հանցագործությունը «սուրբ

նպատակով», որը ելնում է բարձրագույն և ամենաազնիվ պատմական նպատակներից: Հակառակ դեպքում նրանց գործողությունների այդ ահավոր դաժանությունները կարող են կասկած առաջացնել հենց իրենց զինվորների մեջ: Հրեական Հոլոքոստը ներկայացվում էր որպես գերմանական ժողովրդի «ազատագրում» «հրեական դավադրության» վտանգից: Ռուսաստանի գրավումը մատուցվում էր որպես գերմանական ազգի ազատ ոգու համար կենսատարածության ստեղծում: Բոլոր կայսերական ցեղասպանություններն արդարացվում են կեղծ «ազգային ազատագրման» անունով, որի ներքո կայսերական ղեկավարները հասկանում էին ընտրյալ ժողովրդի կոչումը, պատմական աստվածային ժառանգությունը: Ջեյմս Պետրասը նշում է, որ գենոցիդներն իրականանում են կայսրության փլուզման արդյունքում: Դրանք հանդիսանում են «ազգային վերակառուցում» իրականացնելու գործիքներ, «թարմ արյան» հոսք կանչելու նպատակով հին էլիտաների, կառավարողների և «արտոնյալ փոքրամասնությունների» տապալում: Թուրքերի իրականացրած ցեղասպանությունը, որն իրականացվել էր երիտթուրքերի կողմից, կործանվող կայսրության «ազգային վերակենդանացման» ամենալավ օրինակն է՝ կատարված բոլոր «սեպարատիվիստների» ոչնչացմամբ [15]:

Տեսնենք, թե Հայոց ցեղասպանության ժամանակ ինչ դեր է խաղացել երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե թերափի) կուսակցությունը և փորձենք այդ հանգամանքները համադրել վերը քննարկված դրույթների հետ: «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործողություններին անդրադառնանք ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Ճիշտ է, հնարավոր է, որ կարծիքներ լինեն, ըստ որոնց՝ այդ դատավարությունն արդար չի եղել և չի կարելի այն լուրջ հիմք ընդունել, որովհետև պետությունում իշխանություն էր փոխվել, նոր շարժում էր սկսվում և այլն, և ամեն ինչ բարդում էին նախկին իշխանության վրա, սակայն, ըստ մեզ, հենց այդ հանգամանքից ելնելով կարելի է պնդել հակառակը: Մասնավորապես, չենք կարծում, որ նույն իշխանության պարագայում նույն երիտթուրքերն իրենք իրենց մեղավոր կճանաչեին կատարված հանցագործությունների համար և կվարկաբեկեին «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: Կարծում ենք, որ հենց այդ պայմաններում ավելի է մեծացել արդարադատության գործոնը, և երիտթուրքերի դատավարությունը, մեր կարծիքով, կարող է հայերի դեմ իրագործված ցեղասպանության լուրջ ապացույց հանդիսանալ: Թուրքիայի պատասխանատվության մասին խոսելիս ամենակարևոր փաստարկը չեն հանդիսանում կուսակցական մարմինների գործողությունները կամ անգործությունը, բայց մենք կանդրադառնանք միայն կուսակցական մարմինների վարքագծին:

«Իթթիհատ վե թերափի» կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ դատարանը պարզեց. «Միություն և

առաջադիմություն» կուսակցությունը, ամբողջ երկրի կառավարումն իր ձեռքը վերցնելուց հետո, երկիրը ներքաշել է համաշխարհային պատերազմի մեջ, կատարել տեղահանություններ, կոտորածներ և կողոպուտ: ...Վերջնականապես բացահայտված է, թե ինչպես պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը նպաստել և օժանդակել են կենտրոնական կոմիտեի ծրագրին և իրենց մասնաճյուղերում հավաքագրված մարդասպանների և այլ հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և կողոպուտը նրանց ունեցվածքը: Զբաղվել են հարստահարությամբ և տիրացել նրանց գույքին: ...Բոլոր ապացույցները և փաստերը լիովին հաստատում են, որ կոտորածներն անմիջականորեն իրականացվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից ստեղծված «Թեշքիլաթ-ը մահուսետ»-ի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարներն իրենց մասնակցությամբ նպաստել ու հեշտացրել են այդ գործը» [16, էջ 156-160]:

Խարբերդի կոտորածի դատավարության դատավճռում ասվում է. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կնիքը կրող թղթապանակի փաստաթղթերի մեջ գտնվող ծածկագիր հեռագրերից մեկում Էրզրումի վալի Մյունիր բեյը հայտնում է. «Քրդիի ճանապարհով Էրզրումից ուղարկված հարուստ հայերի քարավանները, հարձակման ենթարկվելով Բեհաեդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դերսիմցիների կողմից, կոտորվել են, իսկ նրանց ունեցվածքը՝ կողոպտվել»: Կաստամոնուլի նախկին վալի Ռեշիդ փաշան հայտնում է, որ հիշյալ Բեհաեդդին Շաքիր բեյից ծածկագիր է ստացել տեղահանության մասին: Իսկ Վեհիբ փաշան հայտնում է, որ «Հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ունեցվածքի հափշտակումն ու կողոպուտը նախապես վճռվել էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, որ ...» [16, էջ 177-178]:

Մեկ այլ դատավճռում նշվում է. «Թեև մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ գործադրված հանցագործությունները և պահանջեցին ազատություն, այսուհանդերձ, 1335թ. (1919) մայիսի 3, 20, 22 և հունիսի 9, 10, 25 թվագրությամբ մեղադրական եզրակացություններով բացահայտվեց լուծարքի ենթարկված «Միություն և առաջադիմություն» կուսակցության իրավական դեմքը և հաստատվեց նրա մեղավորությունը կատարված բազմաթիվ հանցագործությունների մեջ: ...Ռազմական աստիճանի դատավարության վերջում բացահայտվեց, որ Տրապիզոնում, Յոզղայթում, Բողազլանում և այլուր տեղի ունեցած կոտորածները կազմակերպվել և գործադրվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից: Դատապաշտպանության ընթացքում նշվեց, որ այդ կոտորածների մասին իբրև թե նրանք տեղեկացել են գործադրվելուց հետո: Մինչդեռ, լիովին բացահայտվեց, որ այդ մասին իրազեկ դառնալուց հետո էլ ոչ մի միջոց չեն ձեռնարկել այդ կոտորածները կանխելու համար [16, էջ 119, 122]:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության ժամանակահատվածում «ցեղասպանություն» (գենոցիդ) եզրույթ դեռևս գոյություն չուներ, այն ի հայտ եկավ միայն 1944թ. նոյեմբերին լույս տեսած Ռ.Լեմկինի «Առանցքի ղեկավարումը բռնազավթված Եվրոպայում» հայտնի աշխատության մեջ: Ռ.Լեմկինի պնդմամբ, այդ հանցագործությունը (ցեղասպանությունը) հանցագործություն էր առանց անվանման: Պաշտոնական շրջանառության մեջ այս եզրույթն առաջին անգամ մտավ 1945թ. հոկտեմբերի 18-ին՝ Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի մեղադրական եզրակացության մեջ, այնուհետև ամրագրվելով ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 1946թ. դեկտեմբերի 11-ի 96/1 բանաձևում և Ցեղասպանության մասին կոնվենցիայում: Այդուհանդերձ, բուն ցեղասպանության հանցագործությունը գոյություն է ունեցել և դիտվել է իբրև պատժելի արդեն հայերի դեմ իրագործված ցեղասպանության ժամանակ [8, էջ 22]:

Ամփոփելով այս ամենը՝ կարելի է ընդգծել, որ Օսմանյան կայսրությունում «Իթթիհատ վե թերաքի» կուսակցությունը բավական լուրջ դեր ուներ երկրի կառավարման գործում, ավելին, պետության՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց մեծ մասը գործում էին կուսակցության որոշումներին համապատասխան: Հետևաբար, չնայած պետությունը դատապարտեց մեղավոր անձանց, այդ գործողությունները վերագրելի էին պետությանը, և Օսմանյան կայսրությունը պատասխանատու էր կատարված ցեղասպանության և այն չկանխարգելելու համար:

Փետրվար, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. United states Diplomatic and Consular staff in Tehran, ICJ Reports 1980.
2. International Court of Justice, Rezervations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory opinion (May 28,1951), I.C.J. Report 1951.
3. *Վարդանյան Վ.*, Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, էջ 72:
4. Barcelona Traction, Lightand Power Company, Limited, Second Phase, I.C.J.Reports 1970, p. 3, at p. 32, para 33 (*Վարդանյան Վ.*, Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, էջ 72):
5. *Հովհաննիսյան Վ.*, Միջազգային պայմանագրերի կնքման և կատարման տեսական և գործնական մի քանի հարցեր, Երևան, 2001:
6. Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America), Merits, I.C.J. Reports 1986, p14, pp62, 64-65, paras 109 and 115.
7. *Քոչարյան Վ.*, Միջազգային իրավունք, Երևան, 2002:
8. *Վլադիմիր Մարգարյան* (Վարդանյան), Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատաս-

- խանաստվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, տե՛ս նաև <http://noravank.am/am/?page=analitics&nid=250>
9. *Василенко В.А.*, Ответственность государства за международные правонарушения, Киев, 1976.
 10. 1948թ. Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 1-3, 9 հոդվածներ:
 11. 2001թ. դեկտեմբերի 12-ի ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 56/83 բանաձևի 1 և 2 հոդվածներ:
 12. *Marko Milanovic*, State responsibility for genocide, The European Journal of International Law Vol. 17 no. 3 © EJIL 2006.
 13. *Jean-Paul Akayesu*, summary of the judgement, Source: ICTR-96-4-T Delivered on 2 September 1998.
 14. Генеральная Ассамблея, Совет по правам человека, A/HRC/10/30 18 February 2009.
 15. *James Petras*. Modernity and Twentieth Century Holocausts: Empire-Building and Mass Murder. http://www.axisoflogic.com/artman/publish/article_22549.shtml
 16. *Փափազյան Ա.Հ.*, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988:

ОТВЕТСТВЕННОСТЬ ГОСУДАРСТВ В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ

Давид Саркисян

Резюме

С целью более детального представления проблемы статья разделена на две части, первая из которых посвящена основным элементам, формам и видам ответственности государства за геноцид. Здесь исследуются и анализируются принятая Генеральной Ассамблеей ООН в 2001г. Резолюция 56/83 об ответственности государств за международно-противоправные деяния, а также конвенция 1948г. о предупреждении преступления геноцида и наказания за него; представлены также соответствующие международные прецеденты. Во второй части статьи – под названием «Действие или бездействие партийных органов как основа для ответственности государства за геноцид» – по итогам изучения вышеупомянутых правовых документов и соответствующих случаев из практики предпринята попытка ответить на вопрос о том, как действия или бездействие партийных органов могут привести к ответственности государства за геноцид. Полученные выводы и заключения экстраполируются на правовую ситуацию с Геноцидом армян.